Հանրակրթության բաժնի վարիչի պարտականությունները
Պատասխանատու է հաստատությունում հանրակրթական ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող աշխատողներին մեթոդական շարունակական օժանդակության ապահովման համար,
հսկողություն է իրականացնում հանրակրթական բլոկի ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը,
համակարգում է առարկայական կաբինետների աշխատանքները,
Ընդհանրացնում և տարածում մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը,
համակարգում է բաժնում գործող ամբիոնների աշխատանքը, մասնակցում նիստերին
Աջակցում է ուսուցման նոր մեթոդների ներդրմանը,
դասախոսներին հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին,
աջակցում է դասախոսներին առարկայական ծրագրերի կազմման գործընթացում,
իրականացնում է դասալսումներ, հետևում է փոխադարձ դասալսումների իրականացմանը
կազմակերպում է միջքոլեջային օլիմպիադաներ, բաց դասեր
համակարգում է առարկայական խմբակների աշխատանքները,
կազմակերպում և համակարգում է ընթացիկ քննությունները, խորհրդատվությունները, ավարտական քննությունները, կազմում է դրանց համար անհրաժեշտ փաստաթղթերը,
մանկավարժական խորհրդին է ներկայացնում հանրակրթական ուսումնական ծրագրերով ուսումնառողների առաջադիմության մասին տեղեկատվություն,
Կազմակերպում և իրականացնում է ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ,
Կազմակերպում և ղեկավարում է հանրակրթական ուսումնական ծրագրերով սովորողների դաստիարակչական, արտաքոլեջային աշխատանքները,
Ապահովում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը, կազմակերպում և մասնակցում է ծնողական ժողովներին,

Մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:
համագործակցում է հանրակրթական բաժնի կուրսղեկների հետ